

ՐԱՂԴԱՍԱՐ ԴՊԻՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հ. Գ. ԲԱՆՁԻՆՅԱՆ

Հայ իրակառնության մեջ XVII դարի սկզբներից ծավալված քաղաքական, մշակութային զարթոնքի արտացոլումը եղավ Ներսես Մոկացու, Մարտիրոս Ղրիմեցու, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի և մյուս քերթողների կրոնահայրենասիրական պոեզիան, որը նախապատրաստեց XVIII դարի ազգային դասական պոեզիայի խոշորագույն ներկայացուցչի՝ Բաղդասար Դպրի ստեղծագործությունը

Դպիր պատվանունով մկրտված այս հայ մտավորականը, որ հայտնի է եղել նաև Կոստանդնուպոլսեցի, Կեսարյան, Գրիգորյան մականուններով, ծնվել է 1683 թվականին Կ. Պոլսում, կեսարացի հույն Գրիգորի ընտանիքում: Հիմնավոր կրթություն է ստացել ծննդավայրում, էջմիածնի նվիրակ Աստվածատուր Զուղայեցու մասնավոր դպրոցում: Այնուհետև ծավալել է հրատարակչական, մանկավարժական, գիտական ու գրական լայն գործունեություն: Նրա լուսագրագիտական աշխատասիրությամբ 1717 թ. ի վեր լույս են տեսել լուսավորչական շարժումների գրքեր, որոնց մեջ են Դավիթ Անհաղթի, Զևեդի, Գրիգոր Նարեկացու, Առաքել Սյունեցու, Գրիգոր Տաթևացու, Սիմեոն Զուղայեցու երկերը:

Ինչպես վկայել է Հովհաննես քահանա Մկրյանը, Բաղդասար Դպիրը, երկար ժամանակ տառապել է թիարանում, որտեղից ազատվել է Պոլսի պատրիարք Հակոբ Նայանի միջամտությամբ¹: Դա տեղի է ունեցել 1740-ական թթ. սկզբին, Նայանի պատրիարքության առաջին տարիներին: Բաղդասարի ստեղծագործության և բանասիրական իրողությունը արձագանք է գտել նրա որոշ տաղերում. դրանցից մեկում ասված է.

Իմ անիրաւ դատաւորն քաղաքիս
Ոչ իրաւամբ վարեալ ընդ իս դատ առնէ:
Թողեալ ի կամս իւր զխորժակն իմ ի յիս,
Որ յամենայն բարւոյ զհոգիս զատ առնէ²:

Բաղդասար Դպիրն ազատելով թիարանից, Հակոբ Նայանը նրան, որպես արդեն համբավվոր մանկավարժի, հրավիրում է Գումգափուի նորաբաց մայր դպրատունը, որպես գլխավոր տեսուչ ու դասախոս: Դատելով Բաղդասար Դպրի հեղինակած երկերից, նա այստեղ կեթող էր դասավանդել բերականություն, տրամաբանություն, հայ ժողովրդի պատմություն, բանաստեղծական արվեստ: Ահա թե ինչ է ասել նրա աշակերտներից մեկը՝ Հայրություն Կարնեցին իր «յուժ քաջակիրթ մանկածու» ուսուցչի մասին.

Հոմերական ումամբ լինել նա ուժտու
Տոհմիս մանկանց, որոց միտք են լուսատու...

¹ Հ. Մկրյան. Աղգաբանություն Պատկանյան տոհմի.—«Արևելք», 3 մայիսի 1893 թ. Սաղյան. Պատկանյաններ. Երևան, 1982, էջ 17—18:

² Բաղդասար Դպիր. Տաղիկներ, աշխատասիրությամբ Շ. Նազարյանի. Երևան, 1965, էջ 64:

Քերթողական արուեստի լեալ յոյժ ճարտար,
Որ ոչ սակաւ ազգիս գտաւ միտքարձ:

Բաղդասար Դպիրը եղել է նաև երաժիշտ և այդ մասին ինքը վկայել է իր տաղերում («Սըգով լընանիմ հառաչելոյ գոլով երաժիշտ»)՝, իր որոշ տաղերի համար, ըստ երևույթին, նա ինքն է երաժշտություն հորինելը:³

Հայտնի է նաև, որ Բաղդասար Դպիրը վախճանվել է 85-ամյա հասակում՝ 1768 թ.:

Բաղդասար Դպրի հեղինակած առաջին գիրքը («Գրգուկս շահաւէտ»․ Կ. Պոլիս, 1718—1720 թթ. միջև, վերահրատարակվել է 1750 թ.) քրիստոնեական ուսմունքի հիմունքների վերաբերյալ մի քաղաքական աշխատանք է: Առավել նշանակալից է 1753 թ. տպագրված նրա «Գրքոյկ որ կոչի Ցանկ գիրք նոր կտակարանին» աշխատանքը, որն աստվածաշնչյան համաբարբառի առաջին տպագիր փորձերից է և բովանդակում է նոր կտակարանի նյութերի ցանկը (10512 տող): Բաղդասար Դպիրը հեղինակել է նաև պատմագրական, պատմագիտական երկեր, որոնց մի մասը չի պահպանվել: Նշանավոր է հատկապես նրա կազմած ժամանակագրությունը: Հայ մշակույթի այս անխոնջ նվիրյալը, իր իսկ վկայությամբ, իր պարտքն է համարել պարզ լեզվով և հանգամանորեն շարադրել ու տպագրել հայ ազգի պատմությունը: Նա, ըստ երևույթին, կատարել է այդ աշխատանքը, որը թերևս մեզ չհասած և աղբյուրներում հիշատակվող «Պատմութիւն տոհմային» երկն է. հեղինակել է նաև «Համառոտութիւն պատմութեան Մովսէս Խորենացւոյ» վերտառությամբ մի երկ, որի ձեռագիրը գտնվում է Երուսաղեմում:

Ժամանակին լայն տարածում են գտել ու մեծ դեր են կատարել Բաղդասար Դպրի հեղինակած ու տպագրած քերականության դասագրքերը: Արդեն 1736 թ. լույս է տեսել երկար տարիների ընթացքում նախապատրաստված նրա գրաբարի երկհատոր քերականության դասագիրքը, որը վերահրատարակվել է Կ. Պոլսում (1771), Մադրասում (1791): Հետագայում, ձգտելով առավել դյուրացնել «գրոց աշակերտներին» գործը, Բաղդասար Դպիրը ստեղծել է և 1760 թ. հրատարակել աշխարհաբար լեզվով մի նոր քերականության դասագիրք: Հայտնի է նաև նրա «Համառոտ մեկնութիւն տրամաբանութեան» երկը, որը լույս է տեսել 1822-ին Կալկաթայում (ըստ երևույթին, մինչ այդ տպագրվել է նաև Կ. Պոլսում, հեղինակի կենդանության օրոք):

Բաղդասար Դպիրը 1752 թ. տպագրել է մի շատ ուշագրավ գիրք՝ «Օրինակք բարեագրաց» խորագրով, որը հիմնականում բովանդակում է նամականիների օրինակներ: Դրանք ունեն թե՛ գործնական-ուսուցողական նշանակություն և թե՛ ճանաչողական ու գեղարվեստական արժեք:

Բաղդասար Դպիրն իր բեղմնավոր գրիչը ծառայեցրել է նաև պատմական տխուր հանգամանքների բերումով մայրենի լեզուն մոռացած, բայց իր ազգային պատկանելությունը գիտակցող թուրքախոս հայությունը: Դեռևս 1742-ին նա լույս է ընծայել իր կազմած «Կրթութիւն քրիստոնէական» խորագրով հայատառ թուրքերեն գիրքը, որը վերահրատարակվել է մի քանի անգամ և որի նպատակն է եղել թուրքախոս հայության մեջ ամրապնդել քրիստոնեական հավատի հիմքերը: Հայության այդ հատվածի մեջ յուսավորչական դավանանքի, հայ ժողովրդի պատմության հերոսական անցքերի և հայ քերթության որոշ նմուշների միջոցով ազգային ինքնաճանաչողություն ու հայրենասիրություն սերմանելու նպատակով է Բաղդասար Դպիրը ստեղծ-

³ Բաղդասար Դպիր. Տաղիկներ սիրոյ և կարօտանաց. հրատարակության պատրաստեցին Շ. Նազարյան, Ա. Մնացականյան. Երևան, 1958, էջ 14:

⁴ Նույն տեղում, էջ 167:

⁵ Տե՛ս Գ. Լևոնյան. Երկեր. Երևան, 1963, էջ 306—308:

⁶ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան. հ. 1, Երևան, 1951, էջ 333—349:

ծել իր մյուս հայատառ թուրքերեն գիրքը, որը տպագրվել է վեց անգամ: Նա գրել է նաև մի շարք հայատառ թուրքերեն բանաստեղծություններ, որոնք ընդգրկված են նրա տաղարաններում ի շարս հայերեն երգերի:

Բաղդասար Դպրի բանաստեղծական ժառանգությունը հիմնականում ամփոփված է նրա տաղարաններում, որոնք զանազան փոփոխություններով ու լրացումներով հեղինակի կենդանության օրոք հրատարակվել են մի քանի անգամ: Դեռևս 1723-ին Կ. Պոլսում լույս է տեսել նրա «Տաղարանիկ փոքրիկ» խորագրով ժողովածուն (ընդգրկում է 62 տաղ): Այնուհետև (1734 թ.) տպագրվել է նրա «Տաղարան փոքրիկ» խորագրով ժողովածուն, որն ընդգրկում է 64 տաղ: Մեր կարծիքով մինչև բանաստեղծի մահը լույս է տեսել նաև «Տաղարան սիրոյ և կարօտանաց» հայտնի ժողովածուն (61 տաղ), որի առաջին տպագրությունն առայժմ հայտնի չէ: 1768 թ. բանաստեղծի մահվան կապակցությամբ մեկ հատորով վերահրատարակվում են նրա այս երեք ժողովածուները: Տաղերի մի համահավաք անթվակիր ժողովածու էլ լույս է տեսել XVIII դարում, հավանաբար բանաստեղծի մահից հետո: Բաղդասար Դպիրը բազմաթիվ ու բազմազան չափածո հատվածներ է հրատարակել նաև իր հեղինակած, կազմած ու խմբագրած գիտական, կրոնական, մանկավարժական գրքերում: Ընդհանուր թվով հայտնի են 200-ից ավելի մեծ ու փոքր ծավալի չափածո գործեր՝ տաղեր, հորդորակներ, քառյակներ, երկտողյակներ և այլն: Իրենց բովանդակությամբ էլ Բաղդասար Դպրի բանաստեղծությունները խիստ բազմազան են. դրանց մեջ կան կրոնական և աշխարհիկ բովանդակության տաղեր, ներբողներ, թաղման ողբեր, խրատականներ, տապանադրեր, չափածո նամակաձևեր և այլն:

Բանաստեղծի հոգևոր երգերն ունեն անձնական և կրոնաազգային բնույթ: Շատ են հատկապես անձնական ապաշխարական ու եղբերբազական բնույթի տաղերը: Ահա մի հատված նրա ինքնատիպ մի հոգևոր երգից, որը ձևված է աշուղական բանավիճակով.

Ի սկզբանէ հոգւոյս ոսոխն աղտեղի
Ձկեղն մեղաց տայ՝ ի հոգիս բոր առնէ:

Եւ ոչ յագի մի և երկու առնելով,
Այլ հանապաղ կրկնակերկնէ, դոր առնէ:

Եւ մինչ ի միտս իմ գամ գերիս եղկելիս,
Ձղջումն իմ ուժգնակի յաշերս թոր առնէ:

Հասցէ՛, Տէ՛ր իմ, յողորմելիս շընորհ քո,
Որ գիմ նըման սև ագռաւունս լոր առնէ՛:

Բաղդասար Դպրի անձնական-ապաշխարական բանաստեղծության վրա մեծ ազդեցություն է գործել հատկապես Նարեկը: Միջնադարի հայ քերթունքի այս խոշորագույն հուշարձանը, որ գրչագրության ու տպագրության միջոցով նոր կյանք էր առել նախորդ հարյուրամյակում, XVIII դարում արդեն ուներ մեկ տասնյակից ավելի հրատարակություններ: Ընդ որում Նարեկի 1726 թ. Կ. Պոլսի հրատարակության գործին իր շատ նշանակալից նպաստն է ներդրել Բաղդասար Դպիրը: Ահա մի տուն նրա մի զղջական տաղից.

Անդնդայնոց յարակցեցեալ օթեցայ,
Իբր զպաճար մուրեհեցեալ շրջեցայ,
Ձօղակօրէն ի ծով մեղաց ծովեցայ,
Ցորում ընկըղմեցայ, մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ՞:

7 Բաղդասար Դպիր. Տաղիկներ, էջ 68:

8 Նույն տեղում, էջ 78:

Գրիգոր Նարեկացու ի խորոց սրտի բխած ողբն ու մարդու կատարելագործման գաղափարը նորովի է հնչում XVIII դարի բանաստեղծի շուրթերից: Մեր առջև դեռևս միջնադարյան մարգն է, որն զգում ու ողբում է իր մեղսականությունը, ձգտում ապաշխարել, սրբագործվել, չմնալ, ինչպես Նարեկացին է ասում, «իբր զանգագայ պաճաբս անասնոց»: Բաղդասար Դպիրն իր մեծ նախորդին սոսկ կրկնողի ու հետևողի կրավորական դիրքում չէ, այլ այս կամ այն չափով դրսևորում է իր բանաստեղծական անհատականությունը՝ թե՛ բովանդակության և թե՛ բանավիճակի մակարդակներում:

Լալով երգեմ երգ հառաչման իմ նմանեալն ի վերայ,
Որք անասնոց հանգունացեալ անմշտանան յարակայ.
Արտեւանեւ ո՛չ ախորժեն ի տրմարդի գընացից,
Դեպի զինքեանս կապեալ ունին թիւրաշաւիղ ընթացից:
Լայնելով զիւրեանց ախորժակն՝ ուր կամին, անգ ընթանան,
Ջերկնային փառսն ո՛չ լիշելով, ինքնակամ անգընգանան,
Իրրեւ զմարդ գոն երեին, շրջագային, բարբառին,
Բայց ի բարուց քառտանեաց ո՛չ բնաւ զանազանին⁹:

Որպես ջերմեռանգ հավատացյալ, Բաղդասար Դպիրն էլ սոսկացել է ահեղ դատաստանից (սխառնին ոսկերք իմ, սարսին և սոսկան), գծագրելով այդ ահեղ օրվա պատկերը:

Մ'ր ահեղ, օ՛ր ահեղ, օ՛ր ահեղ.
Ցորում երկինք, յորում և երկիր տաքնապաւ անցցեն.
Նւ բնութիւնք ամենայն, և բնութիւնք հրդեհեալ լուցցին,
Մ'ր ահեղ, օ՛ր ահեղ, օ՛ր ահեղ:
Ցորում արեգակն և լուսին յորում և խաւարեսցին,
Նւ զօրութիւնք երկնից և զօրութիւնք համայն շարժեսցին:
Մ'ր ահեղ, օ՛ր ահեղ, օ՛ր ահեղ,
Ցորում արդարադատ, յորում հատուցանողն ի յանողորմ
Ի աթոռ նստեալ քննեսցէ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ
մեղաւորիս¹⁰:

Որպես միջնադարյան բանաստեղծ Բաղդասար Դպիրն անդրադարձել է նաև հոգու և մարմնի ներհակության խնդրին, չկարողանալով գտնել որևէ հաշտության եզր և ինքն էլ տառապելով որպես «երկու կամաց ծառայ» (Կոստանդին Սրզնկացի):

Ի մէջ երկոքին ներհակաց անկեալ տարաբերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ, տարաբերիմ,
Երբեմն միոյն, երբեմն միոյն խղճաւապէս,
Ո՛հ, գերի գերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ գերի գերիմ¹¹:

Թվում էր, թե Նաղաշ Հովնաթանի սիրո ու վայելքի երգերից և Ներսես Մոկացու մշակած հայտնի վիճաբանական տաղից հետո պիտի գնալով մարեր այս խնդիրը, բայց, ինչպես տեսնում ենք Բաղդասար Դպրի, այլ և դարի

⁹ Նույն տեղում, էջ 84: Բաղդասար Դպրի առնչակցությունը Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը քննել է Շ. Նազարյանը «Նարեկացիական շարժումը XVIII դարում և նրա արտացոլը Բաղդասար Դպրի քնարերգության մեջ» հոդվածում («Բազմավեպ», 1986, № 1—4, էջ 202—235):

¹⁰ Տաղարանիկ սիրոյ և կարօտանաց և այլ ի Պաղտասար Դպրէ ի վերայ զանազան գունոց (Տաղիկներ սիրոյ և կարօտանաց). Կ. Պոլիս, 1768, էջ 94—95:

¹¹ Բաղդասար Դպիր. Տաղիկներ, էջ 61:

մյուս խոշոր քնարերգուի՝ Սայաթ-Նովայի երգերից, այդ հարցը դեռևս ցավազնորեն խռովում էր մարդկանց հոգիները:

Բաղդասար Դպիրն իր կրոնաազգային երգերով առավել ուղղակիորեն արձագանքել է ժամանակի ազգային հրատապ խնդիրներին: Գրիտոր Լուսավորչին ձոնված տաղում, օրինակ, նա արծարծել է հայրենի հողի վրա հայ ժողովրդի համախմբման, ներքին միաբանության ու միասնականության գաղափարը:

Արդ, ա՛. քէզ զոչեմք, ո՛վ հայոց գթած,
Հայցեա՛ ի Տեառնէ մեզ ողորմութիւն.
Ննդեալ, տառապեալ տոհմիս խղճալոյ,
Տալով՝ զերելոց զերեղարձութիւն.
Ըստ աղերսանաց սուրբ Մարգարէին՝
Ի մեր հայրենիս անգրէն ժողովին¹²:

Բաղդասար Դպիրը յուրացնելով միջնադարյան հայ հոգևոր բանաստեղծության յավազույն ավանդույթները, այն զարգացրեց ու հասցրեց մի բոլորովին նոր որակի, որով իսկ նոր կյանք պարգևեց այդ երգին: Դա պայմանավորված էր մի կողմից բանաստեղծի տաղանդով ու կատարման վարպետությամբ, մյուս կողմից՝ հայ իրականության մեջ կրոնական երգերի հարածուն կենսական պահանջով:

Նշանակալից են նաև Բաղդասար Դպրի խոհախրատական և սոցիալական բովանդակության բանաստեղծությունները, որոնց մեջ ևս հաճախ օրինելով-նկարագրական ոճը տեղի է տալիս սուրյնկտիվ-զգացականին, որի շնորհիվ այդ երգերը ձեռք են բերում անձնական-քնարական բնույթ: Նրա որոշ անձնական-կենսագրական բովանդակության երգեր բացում են մեր առջև ժամանակի թուրքական մայրաքաղաքի պատկերը, որտեղ արդարադատության անարդար մարմինների կողմից հալածվում են հայության առաջադեմ մտավորականները: Ահա թե ինչպիսի նենգ ու անիրավ դատաքննություններ են դատել մեր բանաստեղծին.

Քրչնամիքրն անձինքս, որք պատեցին դիս,
Ինգուաւ նենգաւորաւ նախատեցին դիս,
Նախատեցին դիս.
Արի՛, Տէ՛ր իմ, արի՛ ի յարդարութիւն,
Դատեա՛, Տէ՛ր իմ, զայնոսիկ, որք դատեցին դիս.
Եւ ատեցին դիս:

Յարեան ի վերայ իմ ստագոյն վկայք,
Որպէս սուրբ զօծելոյդ՝ հնոյն քահանայք...
Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց,
Առ ի խածատել ռիս խրախուսեն միմեանց...
Ձոր ուն գիտէի՝ ասէին զինէն,
Եւ դոր ո՛չ գիտէին՝ խօսէին զինէն...¹³:

Ազդեցիկ պատկերների և անմիջական խոսքի շնորհիվ անանձնական հնչեղություն են ձեռք բերել այն տաղերը, որոնց մեջ բանաստեղծն արտահայտել է իր ցավերն ու տանջանքները: Կյանքի հարվածներին ենթարկված Բաղդասար Դպիրն իր մեծ նախորդի՝ Ֆրիկի նման, զրուցում է իր անձի՝ սրտի ու մտքի հետ, խորհրդածելով անցողիկ կյանքի մասին, ձգտելով խաղաղեցնել իր խռովահույզ ներաշխարհը:

¹² Նույն տեղում, էջ 95:

¹³ Նույն տեղում, էջ 94:

Ան՛ձն իմ, ընդէ՛ր հառաւմամբ ի հոգ մըտաց վարանիս,
Կամ զի՞նք ի խոր տրտմելով, ոգոց հանեալ տառապիս.

Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէլ¹⁴,

Ուշագրավ են հատկապես Ոսկուն և Մամոնային ձոնված տաղերը, որոնց մեջ բանաստեղծը ցույց է տալիս աշխարհում տիրող նյութական անհավասարությունը, դրամի կործանարար ուժը: «Բռնաւոր Մամոնան» է հզորություն տալիս արքաներին ու կայսրերին, իր կապանքներով ստրկացնում մարդկանց հոգիները, ծնում աանհուն չարիս», պատերազմներ, անարդարություն, բռնություն: Գեղեցիկ է հատկապես վերջին քառատողը, որտեղ դրամի գայթակղությանը շենթարկված բանաստեղծն իր բարձունքից ասում է Մամոնային.

Դո՛ւ, որ բոլոր տիեզերաց
Բազում զորաց եղեր իշխան,
Տկար մի ոք ի մարդկանէ
Առնէ զքեզ ոտից կոխան¹⁵,

Իր կրտսեր ժամանակակցի՝ Սայաթ-Նովայի նման, Բաղդասար Դպիրը ևս բեզարել-ձանձրացել-տաղտկացել է անարդար աշխարհից, իր այդ հոգեկան ծանր զգացումն արտահայտելով մի գեղեցիկ երգ-բանաստեղծությամբ.

Ի կիսատ սիրելիաց, անհաւատարմաց,
Ի սուտ այս կենցաղոյս ձանձրացաւ անձն իմ.
Ցանստոյգ ընկերաց, լոկ բանիւ յեղբարց,
Ցիրաւի, բընաւին տաղտկացաւ անձն իմ¹⁶,

Մեկ այլ տաղում բանաստեղծն իր անձը համեմատում է ներքին պատերազմներից ավերվող քաղաքի հետ, որի հիմքերը քայքայվում են, պարիսպները փլուզվում, և ինքը, որպես իր ավերվող քաղաք-ներաշխարհի անմիտ իշխանը, բացականչում է. «Վա՛յ քեզ, ո՛վ քաղաք անբախտ, որոյ արքայն մանուկ իցէ, աւա՛ղ»¹⁷: Այս անգամ էլ նրան ձայնակցում է Սայաթ-Նովան՝ «Քա՛նդվում է հոքուս աշխարհը»¹⁸:

Մարդուն, հասարակությանը և առաջին հերթին իր ժողովրդին արատներից մաքրված տեսնելու մտահոգությամբ Բաղդասար Դպիրը գրել է մի շարք խրատական տաղեր, քառյակներ ու երկտողյակներ, որոնք սփռված են նրա ձեռագիր ու տպագիր զրքերում: Լուսավորական գաղափարներով համակված բանաստեղծ-մանկավարժը խրատել է դեռահաս մանկանց՝ հետևել իմաստուն խորհուրդներին և հասնել բարոյական կատարելության: Ահա մի քառատող.

Լե՛ր իմաստուն կամ հետևող իմաստնոց
Կալով ի բաց ի մարդակերպ անասնոց,
Զի գիտութիւնն է իմաստնոց ճառագա՞լք
Տըգիտութիւնն՝ անիմաստից որոգա՞թ¹⁹:

14 Նույն տեղում, էջ 57:

15 Նույն տեղում, էջ 61:

16 Նույն տեղում, էջ 57:

17 Նույն տեղում, էջ 88:

18 Սայաթ-Նովա, խաղեր. Երևան, 1937, էջ 386:

19 Բաղդասար Դպիր. Տաղիկներ, էջ 133:

Բաղդասար Դպրի որոշ տաղեր ու նմանօրինակ շափածո հատվածներ ստեղծվել են գիտաճանաչողական, բացատրական, ուսուցողական նպատակներով: Այսպես, նրա շանքերով է իրագործվել Դավիթ Անհաղթի երկերի առաջին գիտական հրատարակությունը (Գիրք սահմանաց Դավթի Անյաղթի փիլիսոփայի, Կ. Պոլիս, 1731): Այստեղ նա զետեղել է որոշ փոքր ու մեծ բանաստեղծություններ, ներկայացնելով հայ մեծ փիլիսոփային և կատարելով նրա «Չարն ոչ է անեղ» փիլիսոփայական տրակտատի մեկնաբանությունը: Դավիթ Անհաղթի և Ոսկեդարի մյուս մեծերի միջոցով Բաղդասար Դպիրը ջատագովել է անտիկ փիլիսոփայությունն ու որոշ փիլիսոփաների: Իր քերականության դասագրքերից մեկում էլ այսպես է ներկայացրել քերթողահայր խորենացուն.

Քերթողահայր մեծն Մովսէս
էր սերբնդեամբ ի հայ աղգէս,

Յորմէ ուսաք մեք վարժապէս
Ձերթութեան աղնիւ հանդէս²⁰,

Բաղդասար Դպրի բանաստեղծական ժառանգության ամենաարժեքավոր մասը այն շարքն է, որ բանաստեղծը խորագրել է «Տաղիկներ սիրոյ և կարօտանաց»: Այստեղ ընդգրկված երգերը, դատելով դրանց վերնագրերից և արտաքին հատկանիշներից, իրոք ընկալվել են իբրև սիրո երգեր: Մինչդեռ իրականում Բաղդասար Դպիրը սիրո երգիչ չէ: Նրա «սիրոյ և կարօտանաց» տաղերը ձոնված են հայրենիքին, այլաբանական-հայրենասիրական երգեր են: Բանաստեղծն ինքը իր տաղարաններից մեկում նման երգերի համար ծանուցել է. «Ժանիւր աստ, ո՛վ սիրելի ընթերցող, զի քանի մի ինչ յետին եղեալ երգեցմունքս մինչ ցաստ թէպէտ ըստ արտաքին կերպարանքն ցուցանին երգեցմունք մարմնաւոր ուրախութեան, սակայն ըստ ներքին զօրութեան համայնքն առ հոգեւորն վերաբերին: Եւ յետ այնոցիկ են, որք միշտ ղհոգւոյն խորհին»²¹: Այստեղ հեղեղը բառը Գ. Լևոնյանը հասկացել է սոսկ իրոնական իմաստով և եզրակացրել, թե «իւր դպիր պատվանունը և հոգեւոր դպրոցում դասատու լինելը, պատրիարքարանի պաշտոնյա և կաթողիկոսի բարեկամ լինելը բանաստեղծին դրել են այնպիսի դրության մեջ, որ նա ստիպված է եղել սուտ խոսել ժամանակի շար լեզուները լռեցնելու համար»²²: Մինչդեռ Բաղդասար Դպրի ալլաբանությունը բոլորովին այլ իմաստ ու նպատակ ունի: Նա «մարմնաւոր ուրախութեան» երգերի այլաբանությամբ արտահայտել է հայրենիքի հանդեպ սերը, որն անշուշտ ունի առավել հեղեղ բովանդակություն, ավելի բարձր հոգեկան մակարդակի սեր է: Եվ այդ սերը երբեմն դուրս է ցայտել այլաբանական շղարշից, հատկապես նկատի ունենք «ի ննջմանէդ արքայական» նշանավոր երգը, որը և Շ. Նազարյանը վստահորեն համարել է ոչ թե սիրո, այլ հայրենասիրական երգ: Ինչպես ցույց է տվել նա, այդ երգն այդպես է ընկալել արդեն Բաղդասար Դպրի ժամանակակից և գրական աշակերտ Պետրոս Ղափանցին²³, չիշտ է բացատրված նաև Բաղդասար Դպրի՝ այլաբանության դիմելու պատճառը. «Ժամանակի հոշակավոր բանաստեղծն ու գիտնականը, մանկավարժն ու հրատարակչական գործի մենտորը, որին վստահված էր պոլսահայության կրթական-լուսավորչական շարժման ղեկավարությունը, Գում-Գափուի մայր դպրատունը, այլ կերպ վարվելու դեպքում կարող էր վնաս բերել հայ մշակույթի գործին. ուստի, բանաստեղծն իր սրբազան զգացմունքները, ազատասիրությունը արտահայտում է կյանքի այլ և այլ երևույթների նկատմամբ ունեցած ընդդի-

²⁰ Նույն տեղում, էջ 132:

²¹ Տաղիկներ սիրոյ և կարօտանաց, Կ. Պոլիս, էջ 122:

²² Գ. Լևոնյան. Երկեր, էջ 293:

²³ Շ. Նազարյան. Պետրոս Ղափանցի. Երևան, 1969, էջ 29, 369:

մադիր վերաբերմունքով, ինչպես և կրոնական ներբողների, ողբերի, մեղեդիների հառաչանքների մեջ՝ երբեմն բացահայտորեն, երբեմն ալլաբանորեն²⁴, Բաղդասար Դպրի և Պետրոս Ղափանցու՝ վարդի և սոխակի ալլաբանությամբ գրված տաղերի համեմատությունից հետո Շ. Նազարյանը ենթադրել է, թե «արդյո՞ք Պ. Ղափանցու գրական ուսուցչի՝ Բաղդասար Դպրի «Վարանելով, վարանելով մոլար դեգերիմ, աւաղ» սկսվածքով բանաստեղծությունը և նրա նման շատերը սոսկ սիրո երգեր են...»²⁵։ Հետագայում նշված բանաստեղծության մասին նա արդեն վստահորեն գրել է. «Ալլաբանական հայ-բենասիրական երգ է։ Բանաստեղծը «Վարդ» պատկերի տակ ի նկատի ունի հայրենիքը, և ինքը իբրև «խղճալի երգնակ» (սոխակ) հայրենիքի կարոտն ու սերն է երգում։ XVIII դարի անհատական բանաստեղծության մեջ հաճախ են օգտագործվում առխակ-բաճախստեղծ և վառդ-հայրենիք պատկերները»²⁶։ Այսուհանդերձ նույն այս ժողովածուի առաջաբանում Շ. Նազարյանը Բաղդասար Դպրին դիտարկել է որպես սիրո երգչի, ճիշտ համարելով բանաստեղծական այն վարկածը, թե իբր բանաստեղծի սիրերգերի առարկան եղել է անժամանակ մահացած նրա կինը։ Մինչդեռ, ինչպես տեսանք, բանաստեղծն ինքը նշել է, որ իր բոլոր «սիրո երգերը» «առ հոգևորն վերաբերին»։

Հարցին առավել ճիշտ ու հետևողականորեն է մոտեցել Ա. Մնացականյանը, որը թեև բանաստեղծի տաղերի գիտական հրատարակության առաջաբանում նրան համարել է սիրո մեծ երգիչ²⁷, սակայն հետագայում լիովին փոխել է կարծիքը։ «Հիմք կա մտածելու, — գրում է նա, — որ Բաղդասար Դպրի ականակած «հոգևոր» և «զոգույն» բառերի տակ միայն կրոնական գաղափարներ չպիտի ենթադրել։ Ավելին, այն ժամանակ և դրանից էլ առաջ հայ քնարերգության մեջ ընդունված էր հատկապես վարդի և սոխակի մոտիվի օգնությամբ խոսել նաև հայրենիքի և նրա ազատագրման գաղափարների մասին։ Այդպիսի երգերի լավագույն օրինակներ է տվել ինքը՝ ժողովուրդը։ Օրինակ, «Առաւօտուն քամին ելնէ, մաղէ զիս», «Առաւօտուն թըռչունքն ամէն...» և նման ուրիշ երգերում սոխակի որոնած վարդը կամ սիրուհին ավելի շուտ խլված հայրենիքի գաղափարն է»²⁸։ Միանգամայն ճիշտ է նաև բանասերի այն դատողությունը, թե Բաղդասար Դպրի «մտապատկերներում նստած է սերը դեպի հայրենի աշխարհն ու նրա զրկված ժողովուրդը. բայց նա այդ սերը ներկայացնում է ընդհանուր ալլաբանությամբ. մտածել տալով նաև դեպի կինը զգացված սիրո մասին»²⁹։

Հատկանշական է, որ Բաղդասար Դպրի սիրերգության որոշ հատկանիշներով է օժտել նաև իր կրոնական երգերից մեկը՝ «Առ վերինն Երուսաղէմ եկեղեցին անդրանկաց»։

Հըրով քո գերիս, ո՛վ դու գերապաժառ երանեալ,

Շըրջիմ, երերիմ, յոյժ դեգերիմ կարի վարանեալ.

Իհահին քո յարակ կարօտանօք անձկայ ոգի իմ, սէ՛ր իմ,

Բայց զի շատ ունիմ արգելականս գաղտնի դարանեալ³⁰։

²⁴ Նույն տեղում, էջ 28—29։

²⁵ Նույն տեղում, էջ 379։

²⁶ Բաղդասար Դպրի. Տաղիկներ, էջ 139։

²⁷ Բաղդասար Դպրի. Տաղիկներ սիրոյ և կարոտանաց, էջ 44—51։ Այստեղ, մի տողատակի ծանոթագրության մեջ, սակայն, նշված է հետևյալը. «Բաղդասար Դպրի սիրո տաղերից շատերը հայրենասիրական շունչ ու ոգի ունեն։ Ընթերցողին հաճախ թվում է, որ բանաստեղծը սիրուհի ասելով նկատի ունի հայրենիքը, և նրան է ուղղվում սիրո խոսքը» (էջ 59)։

²⁸ Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 555։

²⁹ Նույն տեղում, էջ 556։

³⁰ Բաղդասար Դպրի. Տաղիկներ, էջ 92։

Այս ամենը ցույց է տալիս, որ Բաղդասար Դպրի «սիրող և կարօտանաց»
րոյոր երգերը, իսկ դրանք անցնում են երեք տասնյակից և հորինված են
բանաստեղծի ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում, ունեն այլաբանա-
կան-հալոյնաստիճական իմաստ: Դրանց մեջ ժամանակագրական առումով
առաջինը հիշյալ «Ի ննջմանէդ արքայական» երգն է, որ հորինված է 1708 թ.,
և որ բանաստեղծն ընդամենը 25 տարեկան էր: Պահպանվել է նաև այս երգի
ևղանակը, որի շատ մոտ հնչերանգով է երգվում Սայաթ-Նովայի նշանավոր
«Դուն էն գլխեն»-ը: Այդ վսեմ ու հանդիսավոր եղանակն իսկ ինքնին հա-
վաստում է, որ խնդրո առարկա տաղը իսկապես ոչ թե սիրերգ է (ինչպես
սիրերգ չէ նաև Սայաթ-Նովայի նշված խաղը), այլ բարձր հայրենասիրական
բանաստեղծություն:

Ի ննջմանէդ արքայական
Զարթի՛ր, նազելի՛ իմ, զարթի՛ր,
էհաս նշոյն արեգական,
Զարթի՛ր, նազելի՛ իմ, զարթի՛ր³¹:

«Արքայական» մակդիրն այստեղ ժողովրդի մեծությունն ու վսեմություն-
նը ընդդրելուց զատ թերևս ակնարկում է հայոց պետականության զարթոն-
քի գաղափարի մասին: Դարասկզբին, երբ ստեղծվել է այս երգը, հայ իրա-
կանության մեջ խմորվում էր ազգային ազատագրական պայքարը, և Թուր-
քիայի մայրաքաղաքից ազգի մեծ բանաստեղծը այլաբանորեն կոչ է անում
արթնանալ, քանզի արդեն «էանց գիշերն մթին» և հասավ «նշոյն արեգա-
կան», որ ազատագրության հույսն է: «Արևակէզ գուցէ լինիս», — տաճնապում
է բանաստեղծը, քանզի թշնամիները որպես «տապ և խորշակ ժամանեցին»
և կամենում են այրել վարդ-հայրենիքի գեղեցիկ թերթերը: Երգի յուրաքան-
չյուր տունը եզրափակվում է «Զարթի՛ր, նազելի՛ իմ, զարթի՛ր» տողով,
որով բանաստեղծն առավել ուժգին է հնչեցնում արթնացումի իր կոչը, որը
բանաստեղծությանը հաղորդում է մարտական ոգի, ետ մղելով ողբի ու
կոծի տրամադրությունը: Մեկ այլ համամասն տաղում, որ հավանաբար
գրված է նույն այդ ժամանակ, բանաստեղծը նույն արթնացման կոչն է արել:

Արի՛, սէ՛ր իմ, արի՛, արի՛,
Զարթի՛ր ի բնուդ³²:

Այստեղ էլ սիրուհի-հայրենիքը օժտված է արքայական վեհությամբ,
որպես «թագուհի ամէն ծաղկանց», այստեղ էլ բանաստեղծն ազդաբաբում
է. «Գարունն էհաս, ձրմենն էանց», վստահեցնելով, թե «չի խարչէ դքեղ շողն
արևուն»: Նույն այլաբանությամբ ու տրամադրությամբ է հորինված նաև
«Գարունն եկեալ, անուշ հովերն հնչեցին» տաղը, որտեղ կարդում ենք.

Գիշերն էանց, առաօտն երևեցաւ,
Արևն ահա յարևելից մօտեցաւ,
Ցերեկոյէն ի վեր սրտիկս հալեցաւ.
Բացի՛ր, իմ նազելի՛,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ.
Զարթի՛ր, իմ անեմա՛ն,
Գեղոյդ կարօտ եմ, կարօտ եմ³³:

Այսպիսով, հայ քնարերգության մեջ նոր ուժով ու շնչով հնչում է արք-
նացումի երգը, փոխանցվելով մյուս բանաստեղծներին:

³¹ Նույն տեղում, էջ 34:

³² Նույն տեղում, էջ 33:

³³ Նույն տեղում, էջ 47:

Ա. Մնացականյանին վկայակոչելով, տեսանք, որ հայ միջնադարյան ժողովրդական երգերի մեջ արդեն կան սիրերգերի այլաբանություններ հորինված հայրենասիրական երգեր: Դրանցից է ուշ միջնադարում զանազան տարբերակներով լայնորեն տարածված «Առաւօտուն քամին ելնէ, մաղէ դիս» երգը: «Որքան էլ այստեղ շեշտը դրված է բանաստեղծական գողտրիկ պատկերների վրա, դարձյալ այդ բոլորի միջից մենք տեսնում ենք ոչ միայն սիրուհուց զրկված սիրահարին, այլև հայրենազուրկ հայ երիտասարդին»³⁴: Այս երգի անմիջական ազդեցությամբ է Բաղդասար Դպիրը գրել իր «Զիս քո սիրուն, ո՛վ նազելի, հովերն առեր՝ կու մաղէ» տաղը: Հետևելով այդ ժողովրդական երգի որոշ հատկանիշներին, բանաստեղծը փաստորեն որդեգրել է նաև նրա այլաբանական բովանդակությունը, սիրուհուց զրկված սիրահարի կերպարով պատկերելով հայրենազուրկ հայ երիտասարդին՝ իրեն: Այստեղ էլ, ինչպես նախորդ տաղերում, հայրենիքը բնորոշվում է «նազելի» մակդիրով և կարմիր վարդի այլաբանությամբ. մինչդեռ ինքը՝ հայրենաբաղձ բանաստեղծը «սիրահար» սոխակ է (երգնակ).

Զիս քո սիրուն, ո՛վ նազելի, հովերն առեր՝ կու մաղէ,
Օտարի լեզուն աւելի ցաւ հղեր՝ դիս կու տաղէ, կու տաղէ,
Այս կարօտուս չի դիմացվիր, միշտ զհոգիս կու քաղէ...
Խղճալի այն և ցաւալի թուշակին ես նըման եմ,
Որ սիրովն իմ կարմիր վարդին յարակ ի սուգ մըտանեմ, մըտանեմ,
Ի սար, ի ձոր շրջարերիմ, խընգրեմ և ոչ գրտանեմ.
Դեպի երկիրն իմ սիրելուն
Առնէր, տանէր հովրն զիս, հովրն զիս,
Դեպի յայգին իմ նազելուն
Փըլէր, տանէր քամին զիս, քամին զիս³⁵:

Սա, ըստ էության, նաև «կարօտանաց» երգ է, որտեղ արտահայտված են նազելի հայրենիքից հեռու, օտարություն մեջ տառապող հայ մարդու տենչերը՝ հասնելու հայրենի երկրին, զգի ինքն այլ տեղ, հոգին այլ տեղ, ո՛վ կարէ կալ դադարիլ: Պատահական չէ, որ Բաղդասար Դպրի այս և մի քանի այլ տաղեր դիտվել են որպես պանդխտության երգեր³⁶: Ի դեպ, Բաղդասար Դպիրն է հայ պանդխտության երգերի գլուխ-գործոցի՝ «Կոռնկի» առաջին հրատարակիչը:

Հայրենիքը, ըստ բանաստեղծի, մարդու հոգին է, և նրա նմանօրինակ երգերը, հիրավի, ռառ հոգևորն վերաբերին: Հատկանշական է, որ «Զիս քո սիրուն» երգի եղանակով են գրված Գրիգոր Օշականցու և Սիմեոն Նրևանցու որոշ հայրենասիրական երգեր. սա մի ավելորդ անգամ ապացուցում է, որ Բաղդասար Դպրի այս «սիրոյ տաղիկը» ևս հայրենասիրական բանաստեղծություն է և այդպես էլ լինելով է ժամանակակիցների կողմից:

Մեկ այլ տաղում, որ հիշեցնում է Սայաթ-Նովայի «Ուստի» գուբաս դարի բլբուլ» երգը, բանաստեղծը զուգահեռ է անցկացրել իր՝ սիրուհի-հայրենիքը որոնող սիրահարի և վարդին փնտրող սոխակի միջև, առաջ քաշելով հայրենիքի անփոխարինելիության գաղափարը.

Քո կարօտեալ սիրունըդ ո՛չ է միմիակ,
Զի թէ մինն՝ ո՛չ, գուցե գոյ այլ նըմանակ,
Սակայն այն, որ իմս է, է՝ մի միայնակ...³⁷:

34 Ա. Մնացականյան. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր. Երևան, 1956, գլ 50:

35 Բաղդասար Դպիր. Տաղիկներ, էջ 18—19:

36 Տե՛ս Հայ միջնադարյան պանդխտության տաղեր. Երևան, 1979, էջ 56—58:

37 Բաղդասար Դպիր. Տաղիկներ, էջ 20:

«Սիրոյ և կարօտանաց» տաղերում բանաստեղծը հիմնականում պատկերել է իր՝ հայրենաբաղձ սիրահարի անհանգիստ, աստանդական վիճակը, իբրև ընդհանուր ու սերը հեռավոր ու անհաս հայրենիք-սիրեցյալի հանդեպ, Ուստի և նրա այդ տաղերն ունեն առավել հուզական-քնարական հյուսվածք։ Եվ դրանց մեջ կրկնակ-կրկնեղբերի առատությունն ավելի լսելի է դարձնում նրա ցավի ու կարոտի ճիշն ու հառաչները.

Սիրահար, սիրահար, սիրահար սիրովդ եղեալ եմ, եղեալ եմ,
Հրահար, հրահար, հրահար հրովդ եռեալ եմ, եռեալ եմ:

Քէ յամէն, թէ յամէն թէ յամէն՝ վայելս արօտիմ, արօտիմ,
Կարօտիմ, կարօտիմ, տէր իմ, տեսող կարօտիմ, կարօտիմ՝ մ38,

Հատկանշական է, որ նմանօրինակ մի տաղ է գրել բանաստեղծը յոթանասունն անց հասակում։ Տասնյակ երկար ու ձիգ տարիներ հետո էլ չի խամրել նրա հայրենաբաղձությունը, անսահման կարոտից նրա հոգու ետքը, որ մինչև մահ բորբոքել է նրա զգայուն հոգին.

Քանի աչքն իմ ի քո տեսող հեռանի, հեռանի,
Որպէս զշուր իբր ի կաթսայս եռանի, եռանի, եռանի,
Եւ զի՛նչ ասեմ, թէ մեռանի, մեռանի, մեռանի,
Ուստի արժան է ինձ ասել մեռանի՛մ, մեռանի՛մ, մեռանի՛մ:

Ունայնությամբ զանցեալ օրերս ցրեցի, ցրեցի,
Հոգոյս իմոյ և ո՛ր զօր մի ձրեցի, ձրեցի, ձրեցի,
Տարիքն իմ զեօթանասուն անցեալ գրեցի, գրեցի,
Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ գոչելով՝ ծերե՛ր իմ, ծերե՛ր իմ, ծերե՛ր իմ՝ մ39,

Այսպիսով ուրեմն, Բաղդասար Դպիրը ժողովրդական և աշուղական սիրերգերի որոշ հատկանիշների յուրացմամբ ստեղծել է խիստ անհատական այլարանական-հայրենասիրական եռօրհեակ երգեր։ Առաջինը նա էր (և ոչ թե Պետրոս Ղափանցի)՝⁴⁰, որ հայրենիքը երգեց վարդի ու սոխակի այլաբանությամբ։ Իր այս երգերով նա արձագանքեց ժամանակի ազգային-ազատագրական շարժումներին, ժողովրդի տենչերին, մեր հայրենասիրական երգը բարձրացնելով մի նոր աստիճանի։

Բաղդասար Դպիրի տաղերը հիմնականում հորինված են այս կամ այն եղանակով երգվելու համար։ Բանաստեղծի կարծիքով տաղերը կարդացվելիս «ո՛չ այնքան համեղ երկին», մինչդեռ «ի վերայ դունոցն (եղանակների— Ն. Բ.) վայելանան»։ Ընդ որում դրանք առավել «ճոխափայլ» են արտաբերվում, երբ հնչում են իրենց թիսկական գունովն։ Սակայն չնայած Բաղդասար Դպիրն իր տաղերը ձգտել է հարմարեցնել եղանակներին (և ոչ հակառակը), այնուհանդերձ դրանց մեջ չկա բնազդաբխություն և հիմնական կարդացվելիս էլ նրա երգերը ցուցադրում են իրենց գեղարվեստական արժեքը.— գրում է Գ. Լևոնյանը, որի իրավացի բնորոշմամբ Բաղդասար Դպիրի երգերի լեզուն «հարուստ է թե՛ բառապաշարով և թե՛ շարահյուսական տարրերի ձևերով. բանաստեղծի ոճը վերամբարձ է, բայց ոչ խրթին, պատկերները ցուցադրված են գունեղ և միշտ վարպետորեն ներդաշնակված ձևը բովանդակության հետ»⁴¹։ Ավելացնենք, որ իր երգերի բառագանձը բանաստեղծը

38 Նույն տեղում, էջ 43:

39 Նույն տեղում, էջ 44:

40 Տե՛ս Շ. Ն ա զ ա ր յ ա ն. Պետրոս Ղափանցի, էջ 81:

41 Գ. Լ և ո ն յ ա ն. Երկեր, էջ 299:

գագալիորեն մաքրել է արևելյան լեզուներից եկող և մեր տաղերգության մեջ (հատկապես աշուղական երգերում) թափանցած բառերից ու դարձվածներից, սնվելով հիմնականում ազգային բանաստեղծության ղուլալ ակունքներին:

Բաղդասար Դպրի տաղերն ունեն նոր շրջանի բանաստեղծությանն առավել մերձ ամփոփ ու կառուցիկ կոմպոզիցիա: Դրանք, ինչպես տեսանք, հարուստ են երկնակ-կրկնեղբորով և առհասարակ տաղաչափական այլևայլ ձևվերով, ճոխ հանգերով ու հասգիտություն: Ահա թե որքան, իր խոսքերով ս.սած, «համեղ երևին» առձայնություններով ու բաղաձայնություններով հարուստ նրա բանաստեղծական տողերը.

Գերիս գերհալ գոռամ, գոչեմ,

Աղաղակեմ, լամ, հառաչեմ,

Կամիմ լինիլ, ահա ո՛չ եմ,

Այո՛, այո՛, ևդե եղկելի, ևզկելի...

Փրկի՛ւ, փրկեա՛ւ քի որձանաց, որ փրկողդ ես փորձաթեանց⁴²,

Միանգամայն ճշմարիտ է Բաղդասար Դպրի աղերի հետևյալ գնահատականը, որ տվել է նրա կրտսեր ժամանակակիցն ու հետեորդը՝ Պետրոս Ղափանցին.

Երգեր քոյին երգոց նարօա,

Եւ դրպակեալ ձիր պարեգօտ,

Իւրաքանչիւր բառքն ոսկեգօգ,

Արանց գիտնոց անհաա արօտ⁴³,

Բաղդասար Դպիրը՝ ժամանակի առաջավոր գաղափարների ու ժողովրդի նվիրական իղձերի արտահայտիչը, կարողացել է միահյուսել հայ քնարերգության աարրեր կենսունակ երակները և ստեղծել մի նորօրինակ ազգային բանաստեղծություն, գառնալով իսկապես մի նորարար երգիչ, հիմնադրելով բանաստեղծական մի ամբողջ դպրոց:

БАГДАСАР ДПИР—ПОЭТ

Г. Г. БАХЧИНЯН

Резюме

Крупнейший представитель армянской классической поэзии XVIII в. Багдасар Дпир (1683—1768) был талантливым педагогом, ученым, музыкантом и издателем. Он автор более двухсот больших и малых стихотворных произведений, отличающихся разнообразием формы и содержания. Особую ценность представляют его патристические произведения, значительная часть которых была воспринята в литературоведении как любовные песни. В действительности, Багдасар Дпир—не поэт любви. Используя определенные признаки народной и ашугской любовной песни, он создал сугубо личностные аллегорико-патристические стихотворения. Будучи выразителем передовых идеалов и заветных стремлений народа, Дпир сумел связать воедино животворные струны армянской лирики и создать новый образец национального стихотворения, став основоположником новой поэтической школы.

⁴² Բ ա զ գ ա ս ա ր Դ պ ի ր. Տ ա զ ի կ ն ե ր, էջ 67, 70:

⁴³ Շ. Ն ա զ ա ր յ ա ն. Պ ե տ Ր ո ս Ղ ա փ ա ն ց ի, էջ 343: